600.0423.08.12.21

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 դեկտեմբերի 2021 թվականի № 423Ն
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 16-Ի №125Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2005 թվականի սեպտեմբերի 16-ի «Էլեկտրական էներգիա արտադրող ընկերությունների կողմից առաքված էլեկտրական էներգիայի (հզորության) սակագների հաշվարկման մեթոդիկան հաստատելու մասին» №125Ն որոշման հավելվածի՝ էլեկտրական էներգիա արտադրող ընկերությունների կողմից առաքված էլեկտրական էներգիայի (հզորության) սակագների հաշվարկման մեթոդիկայի՝

1) 1-ին գլխում «(այսուհետ՝ ընկերություններ)» բառերից հետո լրացնել «, բացառությամբ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) կողմից հաստատված էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի առևտրային կանոնների համաձայն մրցակցային պայմաններով գործող արտադրողներ դասակարգված կայանների (ՄԷԱ կայաններ),» բառերը.

2) 2.1.2 գլխում «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով)» բառերը փոխարինել «հանձնաժողովի» բառով.

3) 4.3.1 գլխում՝

ա. «համակարգի օպերատորի կողմից» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև հանձնաժողովի կողմից հաստատված էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի առևտրային կանոնների համաձայն սակագնային կարգավորման ենթակա արտադրողներ

դասակարգված կայանների (ԿԷԱ կայաններ) և հաշվեկշռման ծառայություն մատուցող արտադրողի համար» բառերը,

բ. 1-ին պարբերությունից հանել 2-րդ նախադասությունը,

գ. 11-րդ՝ վերջին պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն.

«Հանձնաժողովի կողմից հաստատված էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի առևտրային կանոններով նախատեսված հաշվեկշռման ծառայություն մատուցող արտադրողի համար հաշվարկվում և սահմանվում է առաքվող էլեկտրական էներգիայի սակագին, էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայում հաշվեկշռման ծառայության մատուցման նվազագույն և առավելագույն սակագներ: Ընդ որում, հաշվեկշռման ծառայություն մատուցող արտադրողից առաքվող էլեկտրական էներգիայի սակագնի հաշվարկներից նվազեցվում է էլեկտրական էներգիայի հաշվեկշռման շուկայում մատուցվող ծառայությունից ստացվող՝ կանխատեսվող օգուտի 50 տոկոսը, որը սակագնի հետագա վերանայման ժամանակ ճշգրտվում է փաստացի արդյունքներով:».

4) 4.3.2 գլխում՝

ա. «հրահանգվում է համակարգի օպերատորի կողմից» բառերից հետո լրացնել «, բացառությամբ հանձնաժողովի կողմից հաստատված էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի առևտրային կանոնների համաձայն սակագնային կարգավորման ենթակա արտադրողներ դասակարգված կայանների (ԿԷԱ կայաններ) և հաշվեկշռման ծառայություն մատուցող արտադրողի» բառերը,

բ. 2-րդ պարբերությունից հանել 2-րդ նախադասությունը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
8 դեկտեմբերի 2021թ.